ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՆՀԱԼԹ - ՍԱՔՍՈՆԱՅԻ ԵՐԿՐԱՄԱՍԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՒ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Սեպտեմբերի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սաքսոնա-Անհալթ երկրամասի Մշակույթի եւ կրթության նախարար Շտեֆան Դորգերոհի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ Մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանի: Հանդիպմանը ներկա էր նաեւ Գերմանիայի հայոց թեմի փոխառաջնորդ Տ. Սերովբե վարդապետ Իսահանյանը:

Հանդիպման սկզբում մշակույթի փոխնախարարը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց հայ-գերմանական մշակութային կապերն ու համագործակցությունը, ինչպես նաեւ տեղեկացրեց, որ այս տարի Հայ գրատպության 500-ամյակի շրջանակներում Գերմանիայի մի շարք քաղաքներում մշակութային տարբեր միջոցառումներ ու ծրագրեր են իրականացվել:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց հայ-գերմանական բազմակողմանի մշակութային համագործակցության առիթով՝ ուրախությամբ նշելով, որ երկու երկրների հարաբերությունները տարեց տարի ավելի են սերտանում եւ համագործակցություն՝ ավելի ընդգրկուն դառնում: Նորին Սրբությունը մասնավորապես կարեւորեց այն օժանդակությունը, որ գերմանացի մասնագետները մատուցում են հայկական հնագույն արժեքների ուսումնասիրության եւ համաշխարհային հանրությանը ներկայացնելու գործում:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց նաեւ Գերմանիայի հայկական համայնքի կյանքին, Հայոց Եկեղեցու եւ Գերմանիայի Եկեղեցիների միջեկեղեցական հարաբերություններին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՇԽԱՐՀԻ ԵԶԴԻՆԵՐԻ ՀՈԳԵՒՈՐ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Սեպտեմբերի 28-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Հյուսիսային Իրաքից Հայաստան ժամանած աշխարհի եզդիների հոգեւոր բարձրագույն առաջնորդ Միրեմիրա Թահսին Բեգի գլխավորած պատվիրակությանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց աշխարհի եզդիների հոգեւոր առաջնորդի այցը Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ ի դեմս եզդիների հոգեւոր առաջնորդի շնորհավորելով հայաստանաբնակ եզդիներին՝ սեպտեմբերի 29-ին Արմավիրի մարզի Ակնալիճ գյուղում սրբատեղիի օրհնության առիթով: Իր խոսքում Նորին Սրբությունը ուրախությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների միջեւ ձեւավորված եղբայրական հարաբերություններին՝ նշելով նաեւ, որ եզդի ժողովրդի զավակները լիիրավ համարկված են Հայաստանի կյանքին:

Հանդիպման ընթացքում Միրե-Միրա Թախսին Բեգը կարեւորեց երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը՝ գոհունակություն հայտնելով, որ եզդիները ազատորեն ապրում են իրենց ազգային-կրոնական կյանքով, ինչի վկայությունն է Արմավիրի մարզում բացվելիք սրբավայրը:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը եւ Իրաքի հայոց թեմի թեմական խորհրդի ատենապետ Պարույր Հակոբյանը:

Հանդիպումից հետո պատվիրակությունն այցելեց Մայր Աթոռի թանգարաններ, ծանոթացավ հայ ժողովրդի ազգային-հոգեւոր արժեքներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Աշխարհի եզդիների հոգևոր բարձրագույն առաջնորդը Մայր Աթոռում